ԱՂՈԹՔՆԵՐ

ՉԱՐ ԱՉՔԻ ԱՂՈԹՔՆԵՐ

1(1267). ՆԻԱԹԻ ԱՂՈԹՔ

Մի մարթ եթե նիաթի ա կյանի, մի պռատից[1] ասեղ ես վեր ունըմ, էտ նիաթը խոսըմ ա, ընքելանը, իփր թե աղոթկն ա արդեն ըլած, էտ աղոթկն ասըմ ես, էտ նիաթն էլ կտրըմ ա, էտ ասեղ ա, բըլավկա, յա ինչ-որ ա տըրան շորըմը սիե մեր ես քցըմ, հա՛ պահըմ ես՝ պահըմ ես:

Հարց.- Եթե նիաթի եկած ա, հըրշտրատըմ ա հա՞:

Պատասխան.- Հա՛, եթե աղոթըմ են, եթե ընդի ասըմ են, հա՛ աղոթըմ են, եթե նիաթը ճիշտ ըլի, հըրշտրատիլ դի:

Ծիրանի տակին,
Գավազանը փակի,
Երեք-երեք,
Մեկը՝ Մոսեսը,
Մեկը՝ Քրիստոսը,
Ի քան տված ըղեղը,
Մահակը՝ ուսին,
Կըլխարկը՝ կըլխին,
Չար աչկը, չար նիաթը կտրի:

2(1268). ԱՉՔԻ ԱՂՈԹՔ

- Ռիստոս, Քրիստոս, որտե՞ղ ես քյնըմ:
- Անառակ սար:
- Ո՞ւր ես քյնըմ:
- Կանը խխալեմ, միսը ուտեմ, ոսկոռը հանեմ:
- Նիաթը ո՞վ կկտրի:
- Օխտը ըռխանի սուրն ու թուրը:
Փուշը՝ աչքին, ցաքին՝ աչքին:

3(1269)

Անտակ ծովի տակը,
Կարմի կովի կաթը,
Չալ օցի պոզը,
Չար նիաթ, չար սըիաթ,
Անուն հոր, և հոքոյ, և սըրփոյ,
Ոչ ուտ անի, մուտ անի, կուտ անի:

4(1270). ԱՂՈԹՔ ՅԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Չարն ընգանվ ճամփեն,
Խերն ի բարի,
Գըլգլան գետը, փըրփըրան գետը,
Չար աչկը ճամփին տըրաքի:

(Երեք անգամ ասում են և խաչակնքում):

5(1271)

Աչկ, աչկ, աչվես,
Աչկի պես աչվես,
Հողի պես մաղվես,
Ուռի պես դողաս,
Կյոմշի պես տըըլնգաս,
Խոզի պես խըռխըռաս,
Կովի պես բառաչես,
Սիա բացվեց,
Շեկ երեխան դուս եկավ,
Սև մարթու սև ծին:

(Ու խաչակնքում են):

---

[1] Պռատ - ֆիզիկական արատ ունեցող մարդ, հաշմանդամ (ծանոթ. բանահավաքի):

6(1272)

Շեկլիկես, ո՞ւր ես գնըմ:
- Անառակ սար:
Նիաթը՝ միսն ուտեմ,
Ոսկուռը հանեմ,
Ո՞վ կկտրի:
- Օխտն ըռխանի սուրն ու թուրը:
Փուշն՝ աչկին,
Տատաշն՝ աչկին:

7(1273)

Հատանա էրեսի մագին,
Սև օցի քստին,
Սիպտակ օցի կաթնին:
Նիաթը ո՞վ կկտրի:
- Սուրն ու թուրը[1]:

8(1274). ԿԻԼԿԱՊ

Կելը կապեմ յոթը բթով,
Հայր Հովսեփի ուքը մատով,
Ագռեն թափվի, ճամփան մոլորվի,
էլ չգա ծեր դուռ:

9(1275)

Աղոթեմ, աղոթեմ, աղ գողանաս,
Օխտը տեղից ճուտ գողանաս,
Մինն ուտես՝ հիվանդանաս,
Մինն էլ ուտես, ոչ վե կենաս,

Քանի կետը փըրփըրի,
Ջանըտ վրետ քրքրվի,
Քանի կետը լափին տա,
Քեզ վեր ունի տափին տա[2]:

---

[1] **4(1270), 5(1271), 6(1272)** և **7(1273)** աղոթքները գրառել է Մարինե Խեմչյանը 2005 թվականին, Դիտավան գյուղում (ծանոթ. կազմողի):

[2] Հավանաբար այս աղոթքն ասվել է կոլինջի դեպքում (ծանոթ. բանահավաքի):